

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն    Հ Ա Մ Ա Բ Ա Ր Բ Ա Ռ**

ԿԱԶՄՎԵԼ Է ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

20.

ՈՒՆՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

**Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն    Հ Ա Յ Ո Յ**

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ԵՒ ԹԱԳԱԽՈՐԱՅ ՀԱՅՈՅ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. 1871 թ.

/ԲՆԱԳՐԱՅԻՆ/

ՀԱՏՈՐ 1 – ին /Ա-Խ/

ԵՐԵՎԱՆ - 1985.

ΛΕΑΑΑΙ ΕΒ Ι ΑΟΕ ΑΔΙ ΒΙ ΝΕΙ Ε ΝΝΘ  
ΕΙ ΝΟΕΟΟΟ ΒÇÛΕΑ ΕΙ . Α×ΑΔΒΙ Α

## ΑΔΙ ΒΙ ΝΕΕΕ ΕΤΙ ΕΤΙ ΔΑΑΙ Ν

ΝΙ ΝΟΑΑΕΒΕΝΒ Ι Τ Ä Τ ΑÛΕΙ ΔΟΕΙ ΑΤ ΑΝΟΑΤ Ι  
ΑΕΑΑΑΙ ΕΕΑ ΑΕΑΑΑΙ ΕΕ Ι ΑΟΕ ΑΔΙ ΒΙ ΝΕΙ Ε ΝΝΘ  
Α.Α. ΑΑΔΑΑΙ ΒΙ Α

20.

ΟΟΟΑΙ ΥΝ ΑΙ ΕΝΕΙ  
ΕΝΟΙ ΔΕΒ ΑΔΙ ΑΙ ΕΕ  
×ΑΝΟΥ Ι ΑΔΑΑΒ

ΕΝΟΙ ΔΕΒ Ι ΑΟΔΕΑΔΟΤ Α Ε ΕΤΙ ΔΙ ΕΑΕ ΑΔΙ ΑΙ ΕΕ

ΑΑΑΔΘΑΙ ΑΟ 1871

/ΟΑΕΝΟΟΑΕÛÛΕ/

ΟΤ Ι 1 / **U-10** /

ΑΔΑΑΑΙ 1985

AKADEMY OF SCIENS ARMENIAN SSR  
HR. ADJARIAN INSTITUTE OF LINGUISTICS

## ARMENIAN CONCORDANSE

COMPILED UNDER THE SCIENTIFIC GUIDANCE OF THE  
ACADEMICIAN A.A. ABRAHAMYAN MEMBER OF THE  
ACADEMY OF SCIENCES OF THE ARMENIAN SSR

20.

UKHTANES EPISKOPOS  
HISTORY OF ARMENIA

PART ONE

HISTORY OF PATRIARCHS AND KINGS OF ARMENIA

VAGARSHAPAT. 1871.

/TEXTUAL/

V. 1 / Ս - Խ /

YEREVAN. 1985.

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԱՐԱՆԸ ՎԵՐԱՄՇԱԿԵԼ, ԼՐԱՑՐԵԼ,

ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ ԿԱԶՄԵԼ

ԵՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ՊԱՏՐԱՍՏԵԼ

ԳԻՏԱՇԽԱՏՈՂ

ՀԱՅԿԱՆՈՒԹ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԽՄԲԱԳԻՐ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈԿՏՈՐ

ՊՐՈՖԵՍՈՐ Ա.Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՂՈՒ ԾՆԵԱՅ ԷՆԾՈՒ ՕՂԷՂ Ի ԱԾԱԾԱՂԻ ՕՂԷՂ, ԱՂ Ի Ի ԷՂ ԷՂԷՂ,

ՕՂԷՆՕՕՂԷՍԻ ՍԷ ԷՂ Ի ԷՂ ԾՂՂԻ Ն ՆՂ ՆՕՂՂԷՂԷՂ

Է

Ի Ի ԱՂԻ ՕՂ ԱՂԷՂ Է ԷՇՂՂԻ ԷԾ

Ի ԱՕ×Ի ՍԷ ՆՂ ՕԾՕՂԻ ԷՂ

ԱՂԷՂԻ ՕՇ ԱՂ ՕՇՂՂՂԻ Ի ԱՂ Ա Ի ԱՂԻ Ի ԷՆՆԻ

ԾՂՂՂՂԷՂԻ Ծ ԱՂ ԷՂԻ Ծ ՕՂԷՂԻ ԷՂ ԱՂ×ԱՂԷՂԷՂ Ի ԱՕԷ

Ի ԾՂ ՕՂՂՂԻ Ծ Ա.Ն.Ի ԱԾՂՂԾԻ

THE AUTHOR CARD WAS RE-ELABORATED ORIGINAL

CONCORDANSE COMPILED AND PREPARED

FOR PUBLICATION BY

HAYKANUSH ANUSHAVAN HOVHANNISSYAN

EDITED BY DOCTOR PROFESSOR

A. S. MARGARYAN

ՀՈՐՄ՝ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ ՁՈՂՎԱԾ  
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ  
ՀԻՇԱՏԱԿԻՆ

**Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն**

Տասներորդ դարի պատմիչ Ուխտանէս Եպիսկոպոսի գործերի՝ ամփոփված «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ, բնագրային համաբարբառը կազմելիս, բացահայտվել են մի շարք անճշտություններ՝ սպրդած գրիչների և հրատարակչի կողմից, որոնք առաջացնում են բառիմաստային և պատմական փաստերի խեղաթյուրումներ: Համաբարբառը կազմվել է ըստ 1871թ. հրատարակված բնագրի, որին հիմք է ծառայել Երևանի Մատենադարանի 1774 համարանիշը կրող ձեռագիրը: Բնագրի հրատարակման ժամանակ այն եղել է Վաղարշապատի ձեռագրատանը:

Անճշտությունները պարզաբանելու համար հարկ եղավ դիմելու բնագրային ձեռագրերի և այն պատմական աղբյուրների ուսումնասիրությանը, որոնցից օգտվել է Պատմիչն իր «Պատմութիւն»-ը գրելիս: Ուսումնասիրվել են Երևանի Մատենադարանում եղած երկու ձեռագրեր: Դա հնարավորություն տվեց հաստատելու հրատարակված գրքում մեր կողմից նկատված անճշտությունները և հնարավորին չափ վերացնելու դրանք:

Հրատարակիչը ևս իր ժամանակին նկատել է որոշ անհարթություններ և գրքի առաջաբանում գրել է. «...զանիմաստն կամ ըստ մեզ դժուարիմացսն, որք գուցէ իցեն գրչասխալք, եղաք նոտրագրով»: /Ուխտ.Եպ. «Պ.Հ.» 1871թ. /

Անճշտությունները երկու բնույթի են. ա / բառիմաստային շեղումներ առաջացնող ուղղագրական սխալներ, և բ / պատմական փաստերի աղավաղումներ:

Ի մի բերելով ձեռագրերի և պատմական աղբյուրների ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև Հ. Աճառյանի՝ 1923թ. «Բազմավեպում» տպագրված Ուխտանէսի գրքի ուղղումները, ստորև ներկայացնում ենք դրանք / քանի որ ըստ համաբարբառի կազմման սկզբունքների, արգելվում է փոխել հեղինակային խոսքը՝ ուղղումներ կատարելու նպատակով / համաբարբառը հնարավորին չափ զերծ պահելու համար բնագրային սխալներից և ամբողջացնելու հեղինակային բառաքանակը:

Նախ կտրվեն Հ.Աճառյանի ուղղումները, ապա մեր դիտարկումները, թեև մի քնիսը համընկնում են: Համընկածներից տրված են **նորախ նորախ** բառախմբի և **Ստածանի-Արածանի** բառի սխալագրության բացատրությունները:

Հ.Աճառյան.

յասակ / 10 / կարդա յուսումն

բառուտ / 2 / - բանոյդ

քառաքք / 23/ - քաղաք / այս բառը գրքում ճիշտ է տպված. Հ.Հ. /

Ստածանի / 23 / - Արածանի  
 սարտիւք / 28 / - մարտիւք  
 Վշմասպեան / 33 / - Վշտասպեան  
 Կղերպատրի / 44 / - Կղեոպատրի  
 իստագիս / 12 / - ի ստադին  
 Շամշագրատ / 46 / - Շամշավրամ  
 Տիտոս նորտի նորտի / 55 / - Տիտոս նորին որդի  
 արգուցն / 81 / - արջուցն / սա Համաբարբառում տրված է ծանուցումով. Հ.Հ./  
 վրապանս / 81 / - վարապանս  
 մտրակի կուշտ / 82 / - մտրակ ի կուշտ  
 ձագարի նատոյ տեղոյն / 89 / - ձագար ի /սա ևս ծանուցումով է տրված, և գրքում  
 էլ ոչ թե տեղոյն, այլ՝ տեղոջ. Հ.Հ. /  
 շուրջ տեսանելեացն պետք է գրել մեկ բառ, իբր թարգմանութիւն ամփիթատրոն  
 ձկի.  
 վաղ «անդունդ» - վախ բառն է, որ սխալ գրութեամբ եղեր է վաղ և ասկե ալ սխալ  
 մը՝ վագ.  
 տար – օտար  
 ուխտից / 40 / - ուղխից  
 Աստուածան / 61 / - Աստուծոյ - աստուածային  
 Վեհնունեաց / 64 / - Մեհնունեաց / 57 /  
 Բժնունեաց / 63 / - Բզնունեաց  
 եփական / 66 / սեփական / 57 /  
 հասումն / 76 / - հոսումն  
 ազատերոյ / 94 / - ազատորերոյ  
 և երկրորդ գրքից՝  
 դանդաղէ / 126 / - դանդանչէ  
 փախմանցն / 135 / - փոխմանցն  
 / Փակագծերում տրված թվերը համապատասխանում են գրքի էջերին: Հ.Հ. /  
 Հիմնական ձեռագրում, որից կազմվել է բնագիրը, նյութը շարադրված է միայն  
 փոքրատառերով, բացառությամբ տիտղոսաթերթի: Գլխատառերը մտցվել են  
 հրատարակչի կողմից, որն էլ իր հերթին լրացուցիչ սխալների տեղիք է տվել:  
 Մեր կողմից կատարված ուղղումները կներկայացնենք ըստ այբբենական  
 հաջորդականության, քանի որ Համաբարբառում այդպես է տրված բառերի  
 կարգը:  
 Կա **յաքեղեայ** բառաձևը, որն իմաստ չի արտահայտի, եթե չդիտվի որպես  
 հատուկ անուն: Փոքրատառով գրությունը շփոթության մեջ է գցել հրատարակչին,  
 որն ստիպված է եղել բառը տալ նոտրագրով, իսկ այդ ձևով թողնելն էլ  
 շփոթության մեջ կզցի նաև Համաբարբառից օգտվողներին: Ահա օրինակը. «...  
 յետ տիրելոյն՝ ասէ՝ ամենայն տիեզերաց Աղէկսանդրի Մակեդոնացոյ՝ որդոյն  
 Փիլիպեայ և Ռոմմալիադայ, որ էր քսան և չորսերորդ **յաքեղեայ** բազմաց տալով  
 զտերութիւնն կտակաւ, ասէ պատմագիրն... և յետ այնորիկ ինքն մեռանի»: Այդ  
 պատմագիրը Մ. Խորենացին է, որից շատ հաճախ է մեջբերումներ կատարել  
 Ուխտանէսը: Իսկ պատմագիրն ասում է. «Յետ տիրելոյն ամենայն տիեզերաց  
 Աղէքսադրի Մակեդոնացոյ...որ էր քսան և չորրորդ յԱքիղայ, բազմաց տալով  
 զտերութիւնն կտակաւ... ինքն մեռանի»: / Մովսիսի Խորենացոյ «Պատմութիւն  
 Հայոց».Տփղիս, 1913./

Համեմատելով երկու հատվածները, պարզ երևում է անձերի նույնությունը: Սա Աքեդէս հատուկ անվան բացառական հոլովն է և պետք է լիներ ոչ թե **յաքեդէայ** ձևով, այլ՝ **յԱքեդէայ**:

Գրքում տեղ է գտել նաև **բա ա ու տ** բառաձևը, որն ինքնին անհասկանալի է այդ տեսքով և այդ պատճառով էլ տրված է նոտրագրով: Ահա բնագրի այդ հատվածը. «... յառաջագոյն հասու էիր լեալ ի գրոյ անտի իմոյ՝ որ բերաւ քեզ ի ձեռն Սիմեօն քահանայի, և ապա ի ձեռն **բառուտ** զբաւանդակն / բովանդակ / ծանուցեալ:»- դիմում է Ուխտանէսը Նարեկավանքի առաջնորդ Անանիա եպիսկոպոսին, որը պատվիրել էր նրան՝ գրելու «Հայոց Պատմություն»:

Հիմք ընդունելով Հ.Աճառյանի ուղղումը՝ **բառուտ - բանոյդ**, կարող ենք ավելի պարզ բացատրել միտքը. Անանիան հեղինակի գրվածքի նյութին նախապես հասու էր եղել Սիմեոն քահանայի ձեռքով բերված Ուխտանէսի գրի, ձեռագրի միջոցով, ապա ամբողջի մասին գաղափար կազմել հեղինակի հաջորդ ձեռագրային առաքումից՝ «ի ձեռն բ ա ու տ » - ի ձեռն բանոյդ, գրվածքից, բանից / տ -դ ցուցական հոդ. դ-տ-ի անցումներ հաճախակի նկատելի են գրքում /: Բան՝ նկատի է առնված գրվածքը, պատմությունը: Խոսքի շարունակության մեջ էլ դարձյալ հիշատակվում է ուղարկված գրի՝ ձեռագրի մասին, Ուխտանէսի և Անանիայի երես առ երես հանդիպելու և «Պատմության» ամբողջական նյութին նրան տեղյակ պահելու մասին:

Պատմական փաստերի խեղաթյուրում թույլ տրված կլիներ, **Գայիսոն** բառի ճիշտ անվանումը չներկայացնելը: Հայտնի է, իսկ աղբյուրն էլ Ագաթանգեղոսն է, որ հռիփսիմյան կույսերի ղեկավարն ու հատկապես Հռիփսիմեի դայակը եղել է Գայանեն: Մինչդեռ հրատարակված գրքում դայակ է հորջորջվել Գայիսոն անունով մեկը: Սա հանգեցնում է և պատմական փաստի խեղաթյուրման, և անձի սեռի՝ կինը դառնում է տղամարդ, այստեղից էլ կենցաղային սովորությունների աղավաղում՝ տղամարդը կնոջ դայակ լինել չէր կարող: Ահա այդ հատվածը. «Իսկ երանելին Հռիփսիմէ... երթեալ բնակէր ի միայնարանի մի մօտ ի քաղաքն Հռովմ՝ հանդերձ երանելովն Գայիսոնի դայեկան իւրով:» Մինչդեռ ձեռագիր բնագրում տրված է ճիշտ ձևով. «... հանդերձ երանելովն Գայիայնի դայեկան իւրով:»: Սա հրատարակչական սխալ է:

Հ. Աճառյանի, «Անձնանունների բառարանում» **Գայանէ** բառի տակ ուրիշ շատ վկայությունների հետ տրված է նաև այս օրինակը, բայց Գայիսոն / Գայիսոնի / ձևով: Երևի մեծանուն գիտնականը ձեռքի տակ ունեցել է միայն տպագիր օրինակը: Նա հիմնվել է պատմական փաստի, և ոչ թե սխալ գրության վրա, և դրա համար էլ Գայիսոնի ձևով տվել է Գայանէ բառի տակ:

Հրատարակչի կողմից անիմաստություն է համարվել նաև ...**իատի** բառաձևը, որը նման տեսքով բառամասի տպավորություն է թողնում: 1774 թվակիր ձեռագրում էլ է **իատի** ձևով, միայն առանց կախման կետերի, իսկ 3732 համարի ձեռագրում տրված է նախկին ձևը, բայց վրայից ուղղում է կատարված. ահա՝ «...զհաւատարմութիւն խնդրէի տեսանել ոչ միայն ի գրոյ **իատի** / ուղղված է՝ այտի որ / առաքեցաւ ի քէն, այլև յերկուց և յերից վկայից հաստատելոց միանգամայն» / Մատենադարանի թիվ 3732 ձեռագիր / : Ահա այս պատկերն է, որ մտքի համար թերևս ավելի հասկանալի է: Իսկ մեր կարծիքով ավելի հավանականը « որ ի այտի առաքեցաւ ի քէն» /թարգմանաբար՝ որ այդտեղից առաքվեց քեզինց /: Ուրեմն կարելի է ասել, որ սա ոչ թե բառամաս է, այլ **ի այտի** բառաձևն է, որից միտքը հասկանալի է դառնում, ուղղակի գրվել է կից: Մանավանդ որ «Պատմութեան»

«Հատուած երկրորդում» այդ բառը գործածված է չորս անգամ /էջ,էջ՝ 33,74,75,94./  
„որք այտի գան ի սուրբ Կաթուղիկէ և յայլ վկայարանս աղօթել, /Տե՛ս Ուխտանէս  
Եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց. Հատուած երկրերդ. էջ 94. Վաղարշապատ  
1871թ./ :

Բնագրում տրված **խորշարագեղ** ձևը՝ «որ էր խորշարագեղ» 1774  
համարանիշը կրող բնագրային ձեռագրում **խորշորագեղ** տեսքով է / ի միջի այլոց  
գրիչը հակում ունի ր-եր ավելացնելու՝ ինչպես ձեռագրի մեկ այլ տեղում՝  
**«պարշարեաց» պաշարեաց-ի** փոխարեն: /

Ուղղագրության խախտման արդյունք է **մանինյութ** կազմությունը, որը գալիս է  
գլխատառերի և կիցգրությունների ոչ ճիշտ ընթերցումից: Այստեղ գործ ունենք  
երկու անկախ բառերի հետ՝ **Մանի** հատուկ անվան և **նիւթ** հասարակ անվան  
հետ: Այլ կերպ, այսինքն ինչպես գրված է, ոչինչ չի հասկացվի: Բերենք բնագիրը.

«երկու բնութիւնս զոյգ ասաց մանինիւթ և խաւար՝ որպէս թէ չար կամ բարի...»:  
Մինչդեռ պետք է լիներ՝ «երկու բնութիւնս զոյգ ասաց Մանի նիւթ և խավար...»:

Սա այն Մանին է, որի մասին վկայում է Ղ.Փարպեցին իր «Թղթում»: Արիոս  
Աղէքսանդրացու, Ապողինարէս Լաւողիկեցու, Նեստոր Անտիոքացու, Եւտիքէս  
Կոստանդնուպօլսեցու հետ հիշատակում է նաև Կումբրիկ ստրկին, «որ և յետոյ  
Մանի զինքն անուանափոխեաց, ուստի և Մանիքեցիք կոչեցան աշակերտեալքն  
նմա:» /Ղ.Փարպեցի, «Թուղթ...» 1904./ Մանին եղել է աղանդավորական  
շարժման ղեկավար, որի անունից էլ առաջացել է աղանդավորության  
անվանումը՝ Մանիքեցիք, ինչպես վկայում է Փարպեցին:

Ուխտանէսն ինքն էլ առանձին յիշատակում է այդ անունը՝ **Մանի** որպես  
աղանդաւորականի:

Նման՝ գլխաբառային սխալ է գրանցված նաև Մխիթար Այրիվանեցու  
«Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ, / որի բնագրային Համաբարբառը  
ևս մեր կողմից է կազմվել / «համայ հեշմայ եկեալ»: /Մ.Այրիվանեցի.  
«Պատմութիւն Հայոց» 1860թ. Մոսկվա/. Մինչդեռ պետք է լինի «Համայ  
Հեշմայ եկեալ»: Ի դեպ, տեղին է նշել, որ հենց Մ.Այրիվանեցու շնորհիվ կարող  
ենք ասել, որ Ուխտանէսի Եռապատում գրքի երրորդ մասը՝ «Սկրտութիւն Ծաղն  
կոչեցեալ ազգաց», որը չկա ձեռագրերում և համարվում է կորած կամ  
չգրված, գրված եղել է հեղինակի կողմից, և տասներեքերորդ դարի հեղինակը՝  
Այրիվանեցին, օգտվել է դրանից և հղում տվել Ստեփաննոս Սյունեցու մասին  
գրված իր վարքագրության մեջ.«...ի սոյն ատուրս / 720-ական թ.թ.Հ.Հ./  
բաժանեցան՝ ի Հայոց Ազգն Ծաղ, ի ձեռն Փարսմանայ ումենն փառամոլ  
քահանայի, որպէս պատմէ սուրբն Ուխտանէս եպիսկոպոսն Սեբաստիոյ:» / տես  
Գարեգին Արքեպիսկոպոս Հովսեփեան «Նորայայտ արձանագրութիւն մը...»  
1931թ. Ն.Նախիջևան/. Մ. Այրիվանեցին երբ օգտվել է Ուխտանէսի  
«Պատմութիւն» -ից այնտեղից նույնությամբ վերցրել է «Բժնունեաց» և  
«Վեհնունեաց» սխալ գրությամբ բառերը, որոնք ինչպես վերը ցույց են տալիս  
Հ.Աճառյանի ուղղումները, պետք է լինեին՝ **Բզնունեաց** և **Մեհնունեաց**  
ձևերով: Այս փաստը խոսում է այն մասին, որ Մ.Այրիվանեցու ձեռքին է եղել  
գուցե և հենց այս ձեռագիրը, բայց ամբողջությամբ, քանի որ ըստ  
հրատարակչի այն արդյունք է ԺԱ կամ ԺԲ դարերի: Դե իսկ Մ. Այրիվանեցի  
էլ ապրել և գործել է 13-րդ դարում, և այդ ժամանակներում, ամենայն  
հավանականությամբ, „Պատմութեան“, երրորդ հատվածը դեռևս հասցրած չի եղել  
անհետանալու:



«Յացի» բառը 1774 ձեռագրում նույնն է ինչ հրատարակության մեջ. «ոչ երբեք **յացի** անձն աստուածային սեր, առ ի սիրել զաստուած»: Իսկ 3732- ում տրված է նույնը, բայց վրան ուղղում է կատարված՝ «յագի անձն աստուածասիրին»: Այս ձևով ավելի պարզ է դառնում, որ ոչ թե **յացի**, այլ **յագի**, քանի որ կարելի է բացատրել միայն մեկ իմաստով՝ աստվածասերի անձը չի հազնում Աստծուն սիրելուց: Այլ կերպ անհասկանալի կմնա:

Նման կառույցով է սկսվում նաև Եղիշեի գրքի մի պարբերությունը. «Ոչ **յագի** չար խրատտուն»/ Եղիշե «Վան Վարդանայ և Հայոց պատերազմին»1957թ. Երևան/

**Նարաղ** գլխաբառը պետք է կարդալ Նաղաբ, ինչպես և **Աբսիուն**՝ Աբիուդ: Այս երկուսը Աստվածաշնչային Ահարոնի որդիներն էին, որոնք պատժվեցին տիրոջ կողմից՝ նրան չհնազանդվելու պատճառով / տես՝ Գիրք Ղևտացուց/:

Բավականին մտորումների տեղիք է տվել նաև անբացատրելի համարված և «նոտրագրով» տրված **նորսի նորսի** բառախումբը: Այս կազմությունը նման տեսքով ոչ մի իմաստ չի արտահայտում: Սակայն հետևելով հենց Պատմիչի շարադրանքին՝ կարելի է հանգել պարզորոշ եզրակացության: Նախադասությունն այս է. «Ի տորա եթներորդ ամի Տիտոս **Նորսի նորսի** / ~ / պաշարեաց զԵրուսաղեմ»: Կայսրերի հաջորդականությունը ներկայացնելիս Ուխտանէսը Տիտոսին հատկացնում է ութերորդ տեղը, իսկ նրա նախորդին՝ Վեսպիանոսին, յոթերորդ: Տիտոսը Վեսպիանոսի կայսրության յոթերորդ տարում է պաշարում Երուսաղեմը: Եթե հաշվի առնենք, որ կայսրությունն անցնում էր «յորդի ի հօրէ» և եթե աշխատենք ճիշտ ընթերցել բառախումբը, մի կողմ թողնելով ընդօրինակող գրչի միտումը՝ **ր** կամ **տ** տառերի անհարկի ավելացնելը բառերում, ապա կկարդանք հետևյալ կերպ՝ **նորին որդի**, / իսկ տ-դ-ի անցումային խաղերը ձեռագրից տպագիր նկատելի են /:

Տեղի խնայողության պատճառով առանց ընդմիջման գրելը՝ կիցգրությունները կարող էին սխալ ընթերցման տեղիք տալ, ինչպես արդեն ասվեց վերևում: Ձեռագրերի համեմատությունն էլ հուշում է այդ միտքը: Այսպես. 1774 ձեռագրում նույնն է ինչ տպագրված է բնագրում, իսկ 3732-ում կատարված է ուղղում այսպիսի տեսքով՝ **նորսի նորսին**, որը կկարդացվի **որսի նորին** : Էլ ինչու՞ ուղղումներ և յավելումներ անենք, երբ ուղղակի կարելի է ճիշտ բաժանել բառախումբը՝ **նորին որսի**՝ դուրս հանելով միայն գրչի ավելագրած **տ** տառը:

**Ողողիմացիք** գլխաբառը՝ ըստ Աստվածաշնչի «Գիրք ծննդոցի» պետք է լինի **Ողողիմացիք**:

**Մխալել** բառը ևս ունի տարագրություն երկու ձեռագրերում: 1774-ում՝ «եթե որ սղալէ», որի նման է և տպագիրը, իսկ 3732-ում ուղղում է կատարված՝ **սղալէ** տեսքով:

Իսկ թե ինչու՞ է **Արածանին** ստացել **Ստածանի** ձևը, կարող ենք բացատրել հետևյալ կերպ. ինչպես արդեն նշել ենք, բնագիր ձեռագրում գլխատառեր չեն գործածված: Գրա հետևանքով փոքրատառ երեքճյուղանի **ա** տառի մի մասնիկը միացվել է հաջորդող **ր** տառի հետ և կարդացվել **տ**, իսկ **ա** - ն՝ **ս**: Այստեղից էլ՝ բառի աղավաղումը՝ **ստածանի** - **Ստածանի**: Բնական է, եթե լինեին գլխատառեր, ապա նման շփոթություններ տեղի չէին ունենա:

Գրքում և 1774 ձեռագրում կա **Պայարիս քաղաք** բաղադրյալ հատուկ անունը, որը նույն ձևով թողնելը դարձյալ պատմական փաստերի խեղաթյուրում կլիներ: Պատմության այս հատվածը ևս վերցված է Մովսես Խորենացուց: Այնտեղ

պատմվում է Պայապիս Քաադեանի մասին, որը տիրել էր երկու մեծ ծովերի միջև ընկած հատվածին: «Պատահե՛ նմա **Պայապիս Քաադեայն** Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ուներ զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց զՊոնտուն և զՈվկիանու» : / Մ.Խորենացոյ «Պատմութիւն Հայոց». Տփղիս, 1913./

Իսկ Ուխտանէսի մոտ այսպէս է. «...պատահե՛ / Արամը Հ.Հ./ **Պայարիս քաղաքի**, որ բռնացեալ ուներ զմիջոցս երկուց ծովուց՝ Պոնտոսին և Ովկիանու, և դիմի հարեալ նմա պատերազմաւ՝ յաղթե՛ բռնատրին...»: Համեմատելով այս երկու հատվածները՝ տեսնում ենք նրանց նույնությունը, միայն այն տարբերությամբ, որ առաջին քաղվածքի բաղադրյալ անձնանունը երկրորդում դարձել է տեղանուն՝ որոշ տառադարձություններով: Սակայն երկրորդ քաղվածքի նյութն էլ, որ դիտավորյալ մի քիչ ծավալուն է մեջբերված, ցույց է տալիս, որ խոսքը դարձյալ **մարդու** մասին է, և **ոչ թե քաղաքի**: Թե չէ քաղաքը ինչպե՞ս կարող էր բնությանը պահել երկու ծովերի միջև ընկած հատվածը, և կամ ինչպե՞ս համարվել բռնավոր:

Ձեռագրերում էլ տարբերություն կա. առաջինում նույնն է, գրքի հետ, իսկ երկրորդում կատարված է որոշ ուղղում՝ **Պայարիս քաղաք**՝ քաղաքի վրա գիծ քաշելով, ուղղվել է Քադեայ տեսքով՝ ոչ ամբողջական ուղղում; Ուրեմն Ուխտանէսի հիշյալ հատվածում էլ **Պայարիս քաղաքը** պետք է դիտվի որպէս **Պայապիս Քաադեայ/ն/**, իսկ համաբարբառում **քաղաք** գլխաբառի տակ՝ 29 էջի օրինակում եղած **քաղաքը՝ Քաադեայ/ն/** անձնանուն: «Գիրք ծննդոցում» **Քաադը** հիշված է որպէս Արբելի որդի և հայր Արբելի: Հենց այս **Քաադից** էլ առաջացել է **Քաադեայ** անունը:

Եվ քանի որ Համաբարբառում **Պայարիս քաղաքը** տրված է երեք տեղում՝

**Պայարիս -**

**Պայարիս քաղաք -**

**Քաղաք - Պայարիս քաղաք**

ապա վերն ասվածները վերաբերվում են այդ երեք ձևերին էլ:

Համեմատությունը «Գիրք ծննդոցի» հետ բացահայտեց, որ գործածված **Ռոզացիք** բառը պետք է լինի **Ռոդացիք՝ Ռոդոս կղզու** անվանումից: **Ռոդացիք** Նոյից սերված Յովհանի սերունդներն էին, որոնք ապրում էին Ռոդոս կղզում՝ այդտեղից էլ **Ռոդացիք** անվանումը:

„Պատմութեան,, Երկրորդ Հատվածում էլ տեղ են գտել մի շարք սխալագրություններ, որոնց վեր հանումը և ուղղագրումը նույնպես կարևոր է շարադրանքի ճիշտ ընթերցման և ընկալման համար:

Այսպէս. նկատված **աշտիճան** գրությամբ բառը պետք է կարդալ՝ **աստիճան**:

**Ուխ**, **ուղխ** բառը հանդես է եկել **ուխտ/ից/** գրութեամբ, որը սակայն չի համապատասխանում բնագրի արտահայտած իմաստին: Ահա այդ հատվածը. «ի սնոտի մեծութենէ իբրև զգետ ինչ ի բազուն **ուխտից** է հարուցեալ. էջ՝ 40/: Ինչպէս տեսնում ենք՝ այստեղ **ուխտը** չէ, որ գետի հետ համեմատության մեջ է դրվել, այլ գետի նման, ինչ որ մեկի սնոտի մեծությունը բազում ուղխերից, հորձանքներից է առաջացել: Այնպէս որ **ուխտ** իմաստը այստեղ բոլորովին չի համապատասխանում:

Կասկած է հարուցում նաև նույն Հատվածում գործածված **տկարական/սն/** բառի ճիշտ գրությունը, մանավանդ արտահայտած իմաստի անորոշությունը: Ահա նախադասությունը. «յանդգնին և անգիտութիւն ասել զԽաչն և զամենայն **տկարականսն**» /էջ՝ 134-135/:

Բառը **ՏԿԱՐԱԿԱՆ** տեսքով ներկայացված է ՆՀԲ-ում և այն էլ ընդամենը մեկ օրինակով՝ «Հրաիրելով ի տկարական կենցաղոյս»՝ հղում արված Կիրակոս Գանձակեցուն, որը սակայն չկա Կ.Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի 1961թ. հրատարակության մեջ: Բերված օրինակում իմաստը համապատասխանում է ընդհանուր մտքին: Թեև փակագծերում երկմտություն է արտահայտված՝ / եթե ոչ տխրականս գրեալ է./ բայց այս գրությամբ էլ կարելի է ճիշտ համարել՝ տկարական, տկար կյանքից./: Այստեղ բառն արտահայտում է անականական իմաստ, որոշիչ է և ունի որոշյալ՝ **տկարական կյանք**:

Իսկ Ուխտանէսի գործում այն արտահայտում է գոյականական իմաստ, և որն էլ չի համապատասխանում արտահայտած մտքին:

Խոսքը գնում է այն մասին, որ աղանդավորականները մերժում են Խաչը՝ որպես քրիստոնեական սրբության խորհրդանիշ, և քրիստոնյայի հոգուն շատ թանկ էլի ուրիշ պարագաներ: Եվ ամենագոր **խաչի** կողքին էլի ի՞նչ **տկար** բաների մասին կարող էր խոսք գնալ, որ նրանք մերժեին, և անգիտություն համարեին, եթե ոչ **կտակարանների**, որոնք տկար լինել չէին կարող համարվել քրիստոնեական ուսմութի ջերմ պաշտպանի՝ Եպիսկոպոս Ուխտանէսի կողմից, իսկ աղանդաւորները դրանց համարել են անգիտություն, որը նրան խիստ վրդովեցրել է:

Չէ՞ որ տկարականը անգիտություն համարվել չէր կարող:

Մեր կարծիքով բառը պետք է կարդալ ոչ թե **տկարականս**, այլ **կտակարանս** ձևով, որով իմաստը պարզ կդառնա՝ „յանդգնին և զանգիտութիւն ասել **զԽաչն** և զամենայն **կտակարանս**,„: Արտագրող գրիչի կողմից երկու՝ **կ** և **ա** տառերի անտեսումից ստացվել է նման թյուրըմբռնում: /Շատ դեպքերում, ինչպես արդեն նշել ենք, ավելագրում, իսկ որոշ դեպքերում՝ թերագրում:/

Գրքի նույն՝ Երկրորդ Հատվածում է առկա նաև **Տուրտաւ** տեղանվան **Տուրտաւ** և **Տուցտաւ** սխալ գրությամբ ձևերը՝ S – Յ, տ - ց: Համաբարբառում այդ բառերը տրված են ճիշտ ձևով՝ փակագծերում ծանոթության կարգով տալով գրքում եղած ձևերը:

Ինչ խոսք, այսքանով չեն սահմանափակվում գրքում տեղ գտած անճշտություններն ու վրիպումները: Դեռևս կան բառաձևեր, որոնք լուսաբանման կարիք ունեն:

Ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ տպագրությունից դուրս է մնացել ձեռագրի՝ «Պատմութեան» համառոտագիր հանդիսացող հատվածը, ընծայագրի հետ միասին, որի մասին մեջբերումով հիշատակված է հրատարակչի կողմից գրքի առաջաբանում: Սակայն չի ներկայացվել տպագրության մեջ՝ որպես բնագրի մաս: Եվ քանի որ այն չի եղել գրքում, այդ հատվածի բառերը դուրս են մնացել համաբարբառից: Համառոտագիրը բացահայտում է ոչ միայն հեղինակին և մեկենասին, այլև գործի ենթադրելի ամբողջական ծավալը:

Ահա այդ հատվածը.

Պատմութիւն Ուխտանէսի Եպիսկոպոսի

որ վասն՝

1. Թագաւորաց և Հայրապետաց մերոց
2. Բաժանման Վրաց ի Հայոց.
3. Սկրտութիւն Ծաղ կոչեցեալ ազգաց

ի խնդրյ Անանիայ վարդապետի Նարեկացոյ  
յամի Տեառն ի Հայոց

Ձպատմութիւն յերիս հատուածս զոր ասացեալ տեառն Ուխտանէսի  
Եպիսկոպոսի ի խնդրոյ հարն անանիայի նարեկավանաց առաջնորդի և  
նախաշար վարդապետի. Հատուածն առաջին յաղագս թագաւորաց և  
հայրապետաց մերոց.

և երկրորդն վասն բաժանման վրաց

և երրորդն յաղագս մկրտութեան ազգին այնմիկ ծաղն կոչեցեալ  
սկիզբն ասացից.

Պատասխանի թղթոյն անանիայի և խոստումն կատարել զհայցուածս  
նորա:

Ուղղագրութիւնը պահպանված է՝ ձեռագրին հավատարիմ մնալով:

Հենց այս հատվածն էլ ինքնին ակամա հուշում է, որ „ԺԱ. կամ ԺԲ. դարերու,,  
ընդօրինակող գրիչի ձեռքի տակ եղել է Ուխտանէսի հենց ամբողջական  
եռամասնեան գիրքը:

Ձեռագրերի ուսումնասիրությունը ի հայտ բերեց նաև «Պատմութեան»  
երկրորդ հատվածի՝ «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» գործի մաս  
կազմող Հայոց Աբրահամ կաթողիկոսի «Թուղթ շրջաբերականի»  
շարունակությունը, որը չկա գրքում և այն ավարտվում է ընդհատված մտքով:  
Չկա նաև 1774 ձեռագրում, որից կատարվել է տպագրությունը: Կիսատ  
հատվածը ավելացված է Մատենադարանի 3732 համարանիշը կրող ձեռագրում,  
որն ընդօրինակել է Ռսկան տեր Գևորգյան-Հովհաննիսյանը՝ 1852թ. հունվարին:  
Ձեռագրի հեղինակը վերջում, ծանոթագրության կարգով, նշել է, որ այդ  
հատվածը վերցված է «յայլմէ օրինակէ», սակայն ցավոք, չի նշել, թե որ  
ձեռագրից է քաղված:

Թեև գրիքը հրատարակվել է 1871թ., սակայն հրատարակիչը ձեռքի տակ չի  
ունեցել այդ օրինակը ևս, որպեսզի ամբողջական տեսքով ներկայացներ  
հեղինակի գործը: Այդ մասին նա տեղեկացնում է գրքի առաջաբանում՝ նշելով որ  
իր մոտ եղածը միակն է: «Մի միայն օրինակ գոյր ի Մատենադարանի Մայր  
Աթոռոյս՝ բոլորագրով օրինակեալ ի ԺԱ կամ ի ԺԲ դարու:»

Գտնված հատվածն ամբողջությամբ ծանոթագրության և Հավելվածի հետ  
տրված է համաբարբառի չորրորդ հատորի վերջում՝ հեղինակի բառապաշարի  
հարստությունն ամբողջացնելու նպատակով:

ՀԱՅԿԱՆՈՒԾ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԵՐԵՎԱՆ  
1987, 2005թթ.

Ա. – Պատմութիւն Հայրապետաց և թագաւորաց Հայոց. Գլուխ Ա. – 1. Գլ. Ա. Պատասխանի թղթոյն Անանիայի, և խոստումն կատարել զհայցուածս նորա: - 113. Եւ յետ նորա նստաւ Աղէքսանդր Ա Եպիսկոպոս Անտիանոս...ամս քսան: - 53.

ԱԲԳԱՐ - Առ սովաւ էր **Արգաթ** թագաւոր Հայոց յՈւռհա. – 45. Վասն թագաւորելոյ **Արգաթու** ի Հայք: - 46,114. Թագաւորէ **Արգաթ**՝ որդի Արշամայ՝ ի քսաներրորդ ամի Արշօրի արքայի Պարսից: -46. Առաքումն իշխանացն **Արգաթու** առ Մառինոս, յորում տեսին զՓրկիչն մեր, ուստի սկիզբն հաւատոցն **Արգաթու**: - 46.114. Տեսալ զփրկիչն մեր Քրիստոս և ակնատես եղեալ՝ պատմեցին **Արգաթու**: -46. Թուղթ **Արգաթու** առ Փրկիչն: - 47,114. Պատասխանի թղթոյն **Արգաթու**, գոր գրեաց Թումաս Առաքեալ հրամանաւ Փրկչին. – 48,114. Չայս թուղթ բերին սուրհանդակք **Արգաթու** – 48. Գնալն Թադէոսի առ **Արգաթ**, և քարոզել քաղաքին Ուռհայի: - 48,114. Թովմաս առաքեալ...առաքեաց զԹադէոս ի քաղաքն Եղեւիայ՝ բժշկել զ**Արգաթ** ըստ բանին Տեառն: - 48. Իսկ իբրև լուս թագաւորն **Արգաթ**, կոչեաց զնա առ ինքն. – 48. Եւ ասէ զնա **Արգաթ** – 48. և ինքն զայ առ Սանատրուկ քեռորդին **Արգաթու**. – 49. և եղեալ ձեռն ի վերայ **Արգաթու**՝ բժշկեաց զնա. – 48. Թուղթ **Արգաթու** առ Տիբեր կայսր Հռովմայեցոց: - 49,114. **Արգաթ** արքայ Հայոց՝ Տեառն իմում Տիբերեայ կայսեր Հռովմայեցոց՝ խնդալ: - 49. Պատասխանի թղթոյն **Արգաթու**: - 50,114. Տիբեր կայսր Հռովմայեցոց՝ **Արգաթու** թագաւորի Հայոց՝ խնդալ: - 50. Թուղթ **Արգաթու**: 51,114. Դարձեալ առաքէ **Արգաթ** առ Տիբեր ի ձեռն գրոյ բանս ինչ պատասխանաց արժանի այլանելոյ սակս Սինկլիտոսին – 51. /Դարձեալ/ Թուղթ **Արգաթու**: - 52. **Արգաթ** արքայ Հայոց՝ Արտաշիսի եղբօր մերում՝ արքայից արքայի՝ խնդալ: - 52. Եւ այսպէս երանելի թագաւորն **Արգաթ** ի ձեռն հրովարտակացն քարոզ լինէր Քրիստոսի յարևելս և յարևմուտս – 52. Վասն թագաւորելոյ որդոյն **Արգաթու** և Մանատրկոյ ի միում ժամանակի: - 53,114. Յետ մահուանն **Արգաթու** բաժանեցաւ թագաւորութիւն Հայոց յերկուս մասն. զմի մասն կալաւ Անանուն՝ որդին **Արգաթու** ... իսկ միս մասինն թագաւորէ Սանատրուկ՝ քեռորդին **Արգաթու**: - 53. նախ **Արգաթ** հաւատաց, և ապա Սանատրուկ իրայօքն. – 53. Նոյնպէս և վասն կատարմանն Աղդէի՝ որ եղև յորդոյն **Արգաթու**՝ ասի բան. – 54. գորմէ գրեաց **Արգաթ** առ Արտաշէս Պարսից արքայն – 54. Իսկ Սանատրուկ ի թագաւորելն իրում զօրաժողով լինէր ի վերայ որդոյն **Արգաթու** – 54. Որ ապա Աստուած պատերազմեցաւ ընդ որդոյն **Արգաթու** – 54. Եւ երարձ Սանատրուկ ի տանէն **Արգաթու** զամենայն զարմ նորա: - 54. Իսկ զլուխ կանանցն **Արգաթու**՝ Հեղինէ անուն՝ չոքաւ յԵրուսաղէմ յաւուրս Կոողիայ կայսեր – 54. և էր կին բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ իբրև զայր իւր **Արգաթ**: - 55. և կոտորէ զամենայն որդիսն Սանատրկոյ, որպէս նա զորդիսն **Արգաթու** – 56. Կեցեալ... **Արգաթ** ամս երեսուն և ութն: - 74. Թուղթ **Արգաթու** /առ Արտաշէս արքայն Պարսից/: - 114. **Արգաթ Լամացի** իշխան աշխարհի՝ առ Յիսուս Փրկիչն և բարերար ... ողջոյն: - 47.

ԱԲԳԱՐ ԼԱՍԱՅԻ - **Արգաթ Լամացի**՝ իշխան աշխարհի՝ առ Յիսուս Փրկիչն և բարերար ... ողջոյն: - 47.

ԱԲԳԱՐՈՍ - առ որ առաքեաց **Արգաթոս** երկուս ի գլխաւորաց իւրոց – 46.

ԱԲԻԱ, ԱԲԻԱՅ – յետ Բարովամայ **Աբիա** ամս երեք. – 32. առաքեալ զթագս զայս ... առնէ ի գլուխ Դաթի արքայի, և ի նմանէ Սողոմոնի, և ի Սողոմոնէ Ռոբովամ, և ապա **Աբիայ** – 109.

ԱԲՏԻՈՒ - և **գԱբտիու** պատագիրոս և զամենայն հիւանդս քաղաքին բժշկեաց. – 49. ԱԲՐԱՀԱՄ – Հաւատաց՝ ասէ՝ **Աբրահամ** յաստուած, և համարեցաւ նմա յարդարութիւն. – 7. Եւ եկեաց Թարայ ամս օխսանասուն, և ծնաւ **գԱբրահամ**: - 20. Յաղագս **Աբրահամու**: - 20, 113. և ոչ կոչեցի անուն քո այսուիտոս Աբրամ, այլ եղիցի անուն քո **Աբրահամ**. – 20. և ապա զկնի ուխտաւորութեանն ասէ Աստուած **գԱբրահամ** – 20. Եւ երկիր եպագ **Աբրահամ** Աստուծոյ: - 20. Եւ եղև **Աբրահամ** թագաւոր և Հայր թագաւորաց: - 21. Եւ այս են ծնունդք Թարայի: **Աբրահամ**, և Նաբովր, և Առան. – 21. ազգաբանութիւնդ հաւաստի է երիցունց ցեղից մետասաներրորդ գոյով **գԱբրահամ** և ցՆինոս և ցմերն Արամ: - 22. **Աբրահամու** իբրև եկն եհաս լրումն աւետեացն, ծնաւ զԻսահակ. – 31. և ամբ կենաց **Աբրահամու** հարիւր օխսանասուն և հինգ. – 31. Սկիզբն արասցուք քեզ պատմել զթագաւորութիւն Պարսից և Հայոց՝ որ **յԱբրահամէ** - 38. **Աբրահամ** նահապետ և գլուխ նահապետաց, և ըստ հաւատոց **յԱդամայ** և ի Նոյէ երրորդ մեզ կոչեցեալ նախահայր – 38. որ ... **Աբրահամ** կոչեցեալ՝ և դարձեալ յորջորջմամբ **Աբրահամ** անուանեալ. – 38. յետ մեռանելոյն Սարրայի առեալ **Աբրահամու** կին զԲետուրա - 38. զորս ի կենդանութեան իւրում **Աբրահամ** մեկնեաց ի Սահակայ – 38. թագաւորեաց Արշակ քաջ՝ որ ի զաւակէ **Աբրահամու**՝ ... առ ի հաստատել բանին Տեառն՝ որ առ **Աբրահամ**, եթէ թագաւորք ազգաց ի քէն ելցեն: - 39. զորս ի կենդանութեան իւրում **Աբրահամ** մեկնեաց յԻսահակայ – 68. և սկիզբն առնու թագաւորելոյ նոցա ըստ հաստատելոյ բանին Տեառն՝ որ առ **Աբրահամ** – 68.

ԱԲՐԱՀԱՄԵԱՆ - Եւ գոսսա ասեն լեալ **Աբրահամեան** զաւակէն՝ որ ի Բետուրայ. – 68.

ԱԲՐԱՄ - Եւ ամենեքեան սոքա նահապետք՝ **յԱդամայ** սկսեալք՝ ծնանելով ուստերս և դստերս մինչև /**գԱբրամ** եկին հասին չափելով իւրաքանչիւր որ զժամանակս իւր, և մեռաւ: - 20. և ոչ կոչեցի անուն քո այսուիտոս **Աբրամ**, այլ եղիցի անուն քո Աբրահամ. – 20. Իսկ **Աբրամու** ոչ ծնան որդիք. – 29.

ԱԲՒՈՆ - Առ նովաւ էին բազում հերձուածողք՝ Մեմանդրոս և Մանի ... և **Աբուն** – 57.

ԱԳԱՐԱԿ - զքաղաքս և զգիւղս և **զագարակս** միանգամայն իսկ և զամենայն երկիրն ի սուր սուսերի մաշեալ ... դառնայ խաղաղութեամբ և մեծաւ յաղթութեամբ յաշխարհն իւր – 72.

ԱԳՈՒՅԱՆԵԼ - և **ագուցանել** հրամայէր նմա վրապանս և որ այլս կազմած սաղաւարտս. – 81. զորս **ագոյց** թագաւորն հանդերձս սպիտակս – 103.

ԱԴԱԿԱՐՍՈՎԴԱՅ - Եւ ի նոսա կղզիք՝ որ են այսոքիկ. **Ադակարսովդայ**, Գեթեթիւրայ... - 23.

ԱԴԱՄ - Յաղագս թագաւորաց: Սկիզբն **յԱդամայ**: - 15, 113. Աստանօր սկիզբն արասցուք պատմել յաղագս թագաւորաց՝ սկսեալ **յԱդամայ**՝ որ է նախահայր մեր – 15. **Ադամ** նախաստեղծն կեցեալ ամս երկերիւր և երեսուն՝ ծնաւ զՍէթ. – 16. և եղեն ամենայն աւուրք **Ադամայ**՝ զոր եկեաց ամբ իննհարիւր և երեսուն, և մեռաւ: - 16. Սա **յԱդամայ** տասներրորդ եղեալ ի թոյն նախահարցն – 17. Եւ յելանել Նոյի ի տապանէն՝ եղև թագաւոր ի վերայ երկրի. զկնի **Ադամայ** երկրորդ թագաւոր: - 18. հրամայեաց նմա Աստուած՝ որպէս յսկզբանն **Ադամայ**, տիրել ամենայնի՝ որ ընդ ձեռամբ նորս իցեն ի վերայ երկրի: - 18. Սա **յԱդամայ** քսաներրորդ լեալ ի կարգէ նախահարցն – 20. Եւ ամենեքեան սոքա նահապետք՝ **յԱդամայ** սկսեալք՝

ծնանելով ուստերս և դստերս մինչև /g/Աբրամ եկին հասին չափելով իրաքանչիւր  
որ զժամանակս իւր, և մեռաւ: - 20. Աբրահամ նահապետ և գրուի նահապետաց, և  
ըստ հաւատոց **յԱդամայ** և ի Նոյէ երրորդ մեզ կոչեցեալ նախահայր, իսկ **յԱդամայ**  
**քսաներրորդ առաջներրորդ** - 38. և լինի /յ**Ադամայ** մինչև ի ծնունդն **Քրիստոսի**՝ ամբ  
հինգ հազար հինգ հարիւր - 44. և ժողովին ամենայն ամբ **յԱդամայ** մինչև ի  
հնգետասան ամն Տրդատայ՝ հինգ հազար ութ հարիւր ամ: - 91. և լինի ամբ **յԱդամայ**  
մինչև ի հնգետասան ամն Տրդատայ՝ հինգ հազար ութ հարիւր ամ: - 91. և լինի ամբ  
**յԱդամայ** մինչև ի տասնևհինգ ամ Տրդատայ՝ հինգ հազար և ութ հարիւր: - 93. Եւ  
**յԱդամայ** սկիզբն արարեալ մինչև ի մարմնանալ **Բանին Աստուծոյ** - 95. /**ՅԱդամայ**  
**առաջին**, որ էր մարդ յերկրէ և թագաւոր ի վերայ երկրի՝ մինչև **ցերկրորդ** Ադամ ..  
լինին ամբ հինգ հազար հինգ հարիւր: - 33.

**ԱԳԱՄ ԱՌԱՋԻՆ** - /**ՅԱդամայ** **առաջին**, որ էր մարդ յերկրէ և թագաւոր ի վերայ  
երկրի՝ մինչև **ցերկրորդ** Ադամ ... լինին ամբ հինգ հազար հինգ հարիւր. - 33.

**ԱԳԳԷ** - և անուն կոչեալ մնա **Ադդէ**, ձեռնադրէ ի վերայ **Եդեսիայ** - 49. Նոյնպէս և  
վասն կատարմանն **Ադդէի**՝ որ եղև յորդոյն Աբգարու՝ ասի բան. - 54. և խնդրեաց  
խոյր **յԱդդէ**. - 54. գոր ապա պատասխանի առնէ մնա **Ադդէ**. - 54. Որ ապա  
Աստուած պատերազմեցաւ ընդ որդոյն Աբգարու՝ խնդրելով վրէժս **Ադդէի**: - 54.

**ԱՋԱՏ** - Եթէ դու յորս հեծցես **յազատ** ի վեր **ի Մասիս**, զքեզ կալցեն քաջք, տարցեն  
**յազատ** ի վեր **ի Մասիս**. - 60.

**ԱՋԱՏ/Ն/ ՄԱՍԻՍ** - Եթէ դու յորս հեծցես **յազատ** ի վեր **ի Մասիս**, զքեզ կալցեն  
քաջք, տարցեն **յազատ** ի վեր **ի Մասիս**. - 60.

**ԱՋԱՐԻԱՅ** - Եւ սպանեալ զմի յազգականաց նորա առաջի նորա՝ Սարի անուն, և  
զՍարատիայ և **զԱզարիայ** որդիս նորա ի տեղի սպանման մատուցեալ. - 45.

**ԱՋԳ** - և զամենայն կարգեալ մի ըստ միոջէ իրաքանչիւր խորհրդոյ ... և յետ  
այնորիկ զմկրտութիւն **ազգին**՝ որ ծաղն կոչի. - 14. և Նոյ էր այր արդար և  
կատարեալ **ազգի** անդ իրում, և եգիտ շնորհս առաջի Տեառն Աստուծոյ: - 17. և  
աճեցին ծնունդք նորա ըստ իրաքանչիւր **ազգաց**: - 18. Եւ աճեցին և եղիցին /են/  
**ազգք**, և անուանեցան լեզուք, և կոչեցան տոհմք ըստ աշխարհաց և գաւառաց. - 19.  
և եղիցիս հայր բազմութեան **ազգաց**. - 20. Հայր **ազգաց** բազմաց եղի զքեզ. - 20. և  
արարից զքեզ **յազգ** մեծ - 20. և տաց քեզ ի նմանէ որդի, և եղիցի **յազգ** մեծ. - 20. և  
թագաւորք **ազգաց** ի նմանէ եղիցին: - 20. և ի նմանէ բազմացան **ազգք** և թագաւորք  
**ազգաց**: - 20. Իսկ ի Մեսոպոտամայ ծննդոցն բազում **ազգք** բաժանեցան. - 21. Եւ ի  
Յարեթայ բաժանեցան և մեկնեցան **ազգք** բազումք. - 22. և մեկնեցան կղզիք **ազգաց**  
յերկիր իւրեանց. - 22. իրաքանչիւր ըստ լեզուս **յազգս** իւրեանց և ի տոհմս իւրեանց  
աճեցին և բազմացան - 22. Եւ այլ սահմանք Քամայ: ... և այլ ևս **ազգք** մինչև ի  
Փռիզիայ, և յԵգիպտոսէ մինչև յՈվկիանոս: - 23. Արդ ծնունդք Սեմայ և Քամայ  
**ազգք** լեալ, և սերեալ ցրուեցան յիրաքանչիւր յաշխարհս և ի գաւառս: - 26. Յաղագս  
**ազգաց** և ծննդոցն Հայկայ, և որ զինչ ի նոցանէ գործք: - 27,113. Իսկ Խոռն յիւր  
անուն անուանէ զազգն Խորխոռունեաց: - 27. և **ազգք** նորա և ծնունդք և աշխարհ  
բնակութեան, և յայնմհետէ սկսան բազմանալ և լնուլ գերկիր: - 28. ամենայն **ազգք**  
զՀայք մեծ կոչեն - 29. և արութիւն ցուցեալ՝ **զազգս** մեր բազմացոյց - 30.. և **ազգի**  
նորա խոստանայ տիրութեան /ծն. Տանուտերութեան/ իշխանութիւն. - 36. թագաւորք  
ազգաց ի քէն ելցեն: - 39. և զտանուտերական պատիւն տայ **ազգին** նորա. - 40.  
առնէ զնա **ազգաւ** Թագադիր լինել Արշակունեաց. - 40. և **ազգի** նորա  
Բագրատունիք անուանէ: - 40. հրամայէ տանջանս հարուցանել ի վերայ Ենանոսի  
... կախել զփայտէ և ջնջել **զազգ** նորա: - 45. և վաճառակոր արար յօտար **ազգս**. -

55. և զլեալսն ի նմանէ պատանիս **ազգ** սերէ յանուն մօր իրեանց Ռոփեայ՝ Ռոփսեան: - 63. Յորոց սերեալ ի նոցանէ **ազգ** Պարթևք անուանեցան. - 68. թագաւորք **ազգաց** ի քէն ելցեն. - 68. և ժողովեաց զգօրս Աղուանից ... և զայլ ևս բազում գօրս յայլոց **ազգաց** - 70. և զխոստացեալ պարզեն տայ մնացեալ **ազգի** նորա: - 78. գոր ել ի վերայ **ազգին** Անակայ - 79. Է աստ այր մի **յազգէ** թագաւորացն Հայոց՝ որում անուն Տրդատ - 81. արդ զկնի կատարման **ազգին** և ընտանեացն՝ առեալ զմանուկն Գրիգոր դայեկացն՝ փախչէին յերկիրն Յունաց. - 84. և էր նա **յազգէ** թագաւորացն - 92. որ էր իններորդ ի կարգի թագաւորացն Հայոց՝ **յազգէ Արշակունեաց**: - 57. և ի սմանէ՝ ասէ պատմագիրն՝ լինել **զազգ Բագրատունեաց**. - 36. որ էր **յազգէն Բագրատունեաց** - 48. և ետ նոցա զՍաւուղ՝ որդի Կեսեայ՝ **յազգէ Բենիամինի**. - 32. Թագաւորք Պարսից **յազգէն Իսահակայ**: - 33. Թագաւորքն Պարսից **յազգէ Իսահակայ**: - 113. Աստանօր դադարումն առնու թագաւորութիւնն Պարսից ի Պարթևաց՝ **յազգէ Պահդակաց** - 69. որոյ սերեալ **ազգ Պարթևաց** - 38. և ի նմանէ ասեն եղեալ **զազգն Պարթևաց**: - 38. Ի սորա աւուրս եղև բաժանումն երկրի՝ և սկիզբն թագաւորութեան **յազգէն Սենայ**: - 19.

ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ - Արդ զայսոսիկ **ազգաբանութիւնս** ստուգեալ ի Մովսիսէ ի մերոյ պատմագրէ ... ասէ - 22. **ազգաբանութիւնդ** հաւաստի է երիցունց ցեղից մետասաներորդ գոլով ցԱբրահամ և ցՆինուաս և ցմերն Արամ: - 22.

ԱԶԳԱԿԱՆ - Եւ սպանեալ զմի **յազգականաց** նորա առաջի նորա՝ ... որդիս նորա ի տեղի սպանման մատուցեալ - 45. ախորժելի է ինձ զձեզ ըստ մարմնոյ **ազգականս** իմ՝ լինել և ինձ մտերիմ ձեզ հարազատ և ըստ հոգւոյ հաւասար միմեանց. - 52. քինախնդիր եղեալ Արտաւանայ **ազգականի** իւրոյ, հալածական առնէ զԱրտաշիր զարքայն Պարսից մինչև ի սահմանս Ճենաց. - 67. ի մեծի տրտմութեան եղեալ վասն նորա, քանզի **ազգական** նորա էր - 69. Եւ սակա այնր աղագաւ եկի ասէր, զի խորհեսցուք ի միասին և մերոյ **ազգականին** վրէժ խնդրեսցուք: - 73. Չսա սպանեալ **ազգականի** իւրոյ Անակայ մեռանի - 74. Արդ ի գոռալն ընդ միմեանս երկուց թագաւորացն այնոցիկ՝ արքային Հայոց Խոսրովու և թագաւորին Պարսից Արտաշրի յաղագս վրէժխնդիր լինելոյ մահուանն Արտաւանայ **ազգականին** Խոսրովու՝ ևս քան զևս սաստկանայր պատերազմ ի վերայ Պարսից յարքայէն Խոսրովայ. - 78. Յաղագս ... աղետին, որ եհաս ընտանեաց նորա և **ազգականաց** նորա ի գօրացն Խոսրովու: - 84,115.

ԱԶԳԱԿԻՅ - Չայսոսիկ տեղեկութիւն տայ հաւատարիմ արանց, որք էին **ազգակիցք** իւր և զաւառակիցք. - 80. և կամէր հարսնանալ Քրիստոսի երկնաւոր թագաւորին. և ընտանի և **ազգակից** լինէր. - 92.

ԱԶԳԱԿՅՈՒԹԻՒՆ - ճշմրիտ կուսութիւնն **ազգակցութիւն** ունի առ հրեշտակս. - 92.

ԱԶԳԱՏՈՂՄ - գոր ապա յերկեղէ կատարէ զկամս արքային հանդերձ **ազգատոհմի**. - 45.

ԱԶԳ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ - որ էր իններորդ ի կարգի թագաւորացն Հայոց՝ **յազգէ Արշակունեաց**: - 57.

ԱԶԳ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ - և ի սմանէ՝ ասէ պատմագիրն՝ լինել **զազգ Բագրատունեաց**. - 36 որ էր **յազգէն Բագրատունեաց** - 48.

ԱԶԳ ԲԵՆԻԱՄԻՆԻ - և ետ նոցա զՍաւուղ՝ որդի Կեսեայ՝ **յազգէ Բենիամինի**. - 32.

ԱԶԳԻ - և որսային **ազգի ազգի** հնարիւք մեքենայից հրացանութեամբ - 15. ապա այնուհետև հրամայեաց չարչարել զսուրբ Գրիգորիոս բազում և **ազգի ազգի** չարչարանօր և նեղութեամբ տանջել. - 85.



ԱԶԳԻ ԱԶԳԻ - և որսային **ազգի ազգի** հնարիւք և մեքենայից հրացանութեամբ - 15. ապա այնուհետև հրամայեաց չարչաչել գտորք Գրիգորիոս բագում և **ազգի ազգի** չարչաչանօք և նեղութեամբ տանջել. – 85.

ԱԶԳ ԻՍԱՀԱԿԱՅ - Թագաւորք Պարսից **յազգէն Իսահակայ:** - 33. Թագաւորքն Պարսից **յազգէ Իսահակայ:** - 113.

ԱԶԳ ՊԱՀՂԱԻԿԱՅ - Աստանօր դադարումն առնու թագաւորութիւնն Պարսից և Պարթևաց՝ **յազգէ Պահղակաց** – 69.

ԱԶԳ ՊԱՐԹԵՒԱՅ - որոյ սերեալ **ազգ Պարթևաց** – 38. և ի նմանէ ասեմ եղեալ **զազգն Պարթևաց:** - 38.

ԱԶԳ ՍԵՄԱՅ - Ի սորա ատուս եղև բաժանումն երկրի՝ և սկիզբն թագաւորութեան **յազգէն Մեմայ:** - 19.

ԱԶԳ - Չոր իմացեալ օրիորդին Տիգրանուհեայ, **ազդ առնէ** Տիգրանայ եղբօր իւրում զնենգ Աշդահակայ: - 37. և **ազդ առնէր** Փիլիպպոսի կայսեր Հռոմայեցոց – 70.

ԱԶԳ ԱՌՆԵԼ - Չոր իմացեալ օրիորդին Տիգրանուհեայ, **ազդ առնէ** Տիգրանայ եղբօր իւրում զնենգ Աշդահակայ: - 37. և **ազդ առնէր** Փիլիպպոսի կայսեր Հռոմայեցոց – 70.

ԱԶԳՈՒՄՆ - Չոր իմացեալ քաջին Հայկայ յազդմանէ Կաղմայ թռռին իւրոյ, ելանէ իւրայնօքն հանդերձ ի պատերազմ Բելայ. – 26. և **ի յազդմանէ** նոցա և ի շոգոյն և ի գոլորշիացն՝ թխացեալ լինէր մարմինք նորա և սևացեալ իբրև զածուխս. – 90.

ԱԶՔԱՆԱԶԵԱՆ – Հրաման տուր՝ ասէ՛ Արարատեան թագաւորութեանն և **Ազքանազեան գնդին.** - 35.

ԱԶՔԱՆԱԶԵԱՆ ԳՈՒՆԴ - Հրաման տուր՝ ասէ՛ Արարատեան թագաւորութեանն և **Ազքանազեան գնդին.** – 35.

ԱԹԱՆԱՍԻ - և ասէաք զՊատարագամատոյցն Տեառն զօրութեանց, զոր ասեմ **Աթանասի** – 12.

ԱԹԵՆԱԳՈՐՈՍ - և ժողովէ եպիսկոպոսք ի տեղեաց տեղեաց յԱնտիոք յաղագս նգովելոյ զՊօղոս Սամոստացի. Դիոնէսիոս ի Հռոմայ ... Գրիգորիոս և **Աթենադորոս,** եղբարք եպիսկոպոսք եկեղեցեացն Պոնդացոց – 76.

ԱԹԵՆԱՅԻ - և հարցանէր վասն **Սեկենտոսի** փիլիսոփայի **Աթենացոյ** – 59.

ԱԹԵՆԱՅԻՔ – Սա եկն ի գաւառն **Աթենացոց** – 59. \_

ԱԹՈՌ - Այլև յերկրորդական նստուցանէր **յաթոռ** թագաւորութեանն իւրոյ զԱնակ: - 73. եհաս ժամանակ Տրդատայ ժառանգելոյ **զաթոռ** թագաւորութեան իւրոյ զհայրենիսն – 81. և նստաւ սուրբն Գրիգոր **յաթոռ** Կաթողիկոսութեան Հայոց մեծաց: - 99. Յաղագս Եպիսկոպոսաց՝ որք ընկալան **աթոռ** ի տեղիս տեղիս ի սրբոյն Գրիգորէ յիւրաքանչիւր գահս: - 110,115. ինքեանք և որ զկնի իւրեանց յաջորդեն **յաթոռ Հայրապետութեանն Հայոց** և Հռոմոնց: – 107.

ԱԹՈՌԱԿԱԼ - Արդ յայսմ վայրի **զաթոռակալս** շարադրեցից – 100.

ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹԻՒՆ - Այս երեսուն Եպիսկոպոսք, որք **աթոռակալութեամբ** ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ - 100.

ԱԹՈՌԸՆԿԱԼ – որպէս Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի է կարգեալ և եղեալ զսեփիական **աթոռընկալ** Եպիսկոպոսացն զկարգս. – 100.

ԱԹՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ - ինքեանք և որ զկնի իւրեանց յաջորդեն **յաթոռ Հայրապետութեանն Հայոց** և Հռոմոնց: – 107.

ԱԼԱՆՔ - Չայնու ժամանակա լինի պատերազմ Արտաշիսի ընդ արքային **Ալանաց**. – 58. Եւ կատարեցան ի նոյն լերինն /ի/ Բառահալայէ բռնաւորէ եկեալ **յԱլանաց**: - 58.

ԱԼԻՍ - երթեալ բնակէին յայրի մի յեզր գետոյն՝ որ կոչի **Ալիս** – 87.

ԱԽԵԼ - և ասացեալ նախ զբացումն դրանցն **ախելոց**, և գյաղթումն զօրացն, և զդարման երիվարացն – 82.

ԱԽՈՐԺԵԼ – տայցէ թէ **ախորժես**, գյեղանակս ժամանակին յայտ արարից – 12.

ԱԽՈՐԺԵԼԻ – համարձակիմ ծառայական բանի քո յետին և տրուպ աշակերտս՝ կամ որպէս թէ **ախորժելի է** քում պատուասիրութեանդ - 10. **ախորժելի է** ինձ զձեզ ըստ մարմնոյ ազգականս իմ՝ լինել և ինձ մտերիմ ձեզ հարազատ և ըստ հոգոյ հաւասար միմեանց. – 52.

ԱԽՈՒՐԵԱՆ - և նստաք յեզր գետոյն՝ որ կոչի **Ախորեան** – 12.

ԱԽՏ - Եւ ապա պատուեալ **գախտն** իւր վավաշն այն Շամիրամ, առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ բազում ընծայիւք – 30. և նա բժշկեսցէ **գամենայն ախտս** հիւանդութեան՝ որ ի ձեզ - 52.

ԱԾԵԼ - և ես **ածից** ջրհեղեղ ի վերայ երկրի – 18. և սորա ասեն զմի ի գերելոց գլխաւորաց Եբրայեցոցն խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ, անուն Շամբատ, **ածեալ** բնակեցոյց յերկիրս մեր մեծաւ պատուով – 36. և առանց ոսկոյ և ականց մարգարիտ երեքտակեան վարսակալ հրամայէ **ածել** թագաւորին իւրոյ – 40. ապա օգնականութեամբ Դարեհի **ածէ** ի Հայս. – 56. իբրև լուա զայս կայսրն, հրամայեաց **ածել** զՏրդատ: - 82. և **ածեալ** յանդիման կացուցանէ կայսերն: - 82. Սա յառաջադէմ եղեալ՝ զաւագութեան **ածէր թեկն** Հայոց և Պարսից միապէս. – 42. **ընդ վայր ածելով** երիվարաւ անկանի ի խոր իմն տեղի մեծ և խորատոյ՞ լեալ անհետի: - 69. զհետ երթայ ամօք և ժամանակօք **ի գարնացումն ածեալ** զլսօղս – 59. և ոչ կարաց **ի կամս** իւր **ածել** գերանելի սուրբ տիկինն Հռիփսիմէ. – 92. **ի կարգ** քահանայութեան **ածցեն** զԼուսաւորիչն – 97. և **խորհուրդ ածեալ** գամենայն բաշխէր նոցա զկենդանարար սուրբ Մարմին և զԱրիւն Փրկչին մերոյ. – 101. և **նշան ածէին** զտեղի բնակութեան նոցա: - 87.

ԱԾԵԼ ԹԵԿՆ - Սա յառաջադէմ եղեալ՝ զաւագութեան **ածէր թեկն** Հայոց և Պարսից միապէս. - 42.

ԱԾՈՒԽ - ի յագումանէ նոցա և շոգոյն և ի գոլորշիացն՝ թխացեալ լինէր մարմինք նորա և սևացեալ իբրև **գածուխս**. – 90.

ԱԿԱՆԱՏԵՍ – տեսեալ զՓրկիչն մեր Բրիստոս՝ և **ականատես եղեալ**՝ պատմեցին Աբգարու: - 46.

ԱԿԱՆԱՏԵՍ ԼԻՆԵԼ – տեսեալ զՓրկիչն մեր Բրիստոս՝ և **ականատես եղեալ**՝ պատմեցին Աբգարու: - 46.

ԱԿԱՆՁ – քաջին Արգամայ տայ գերկրորդականն գահ՝ և պսակ յականց կապեալ՝ և զհնդս ոսկի յերկոսին **յականջսն**. – 57.

ԱԿԵԱՅ - Արդ յայսմ վայրի զաթոռակալս շարադրեցից և յայտ արարից զհրաքանչիւր գահս ... առաջին՝ Հարքայ Եպիսկոպոսն ... քսանևմինն՝ **Ակեոյ** – 100.

ԱԿՆ /ակնեղեն/ - և առանց ոսկոյ և **ականց** մարգարիտ երեքտակեան վարսակալ հրամայէ **ածել** թագաւորին իւրոյ – 40. յառաջ՝ քաջին Արգամայ տայ գերկրորդականն գահ՝ և պսակ **յականց** կապեալ – 57.

ԱԿՆ /աչք/ - և յայսմ ևս **ակն ոչ ունէի** – 13. յայնժամ աշակերտն վարդապետին արուեստին **ակն ունի**, յորժամ զդեգերանսն որպէս զբարեկամ ողջունեսցի: - 13.

ԱԿՆ ՈՒՆԵԼ – և այսմ ևս **ակն ոչ ունի** – 13. յայնժամ աշակերտն վարդապետին արուեստին **ակն ունի**, յորժամ գրեգերանսն որպէս զբարեկամ ողջունեսցի: - 13.

ԱՀ – Նակ **գահ և գերկիւղ** և սպառնալիս գազանամիտ և թեթևահաւատ /և/ ճուաղաբարոյ մարդկան այնոցիկ ի վերայ մեր: - 14. և **ահ և երկիւղ** ձեր ի վերայ ամենեցուն եղիցի: - 18. Իսկ արքայն Պռոքոս **ահիւ** մեծի **եղեալ** տագնապէր – 81. և առհասարակ ամենեքեան **ահիւ ըմբռնեալք** արք և կանայք՝ միանգամայն և ամենայն հասակ: - 94.

ԱՀԱԳԻՆ – Իսկ ապա ընդ բանից կնոջն գայ վիշապն **ահագին** շարժմամբ և շառաչմամբ յոյժ. - 66. և մղեալ զնա ի ջուր գետոյն՝ որ մօտ առ նա կայր՝ իբր **ահագին** գերան – 66.

ԱՀԱՐՕՆ - Բայց այդ լինիմ քեզ **Ահարօն** և Եսայիաս. - 2.

ԱՀԱՒԱՍԻԿ - **ահաւասիկ** ես և մանկունք իմ՝ զոր ետ ինձ Աստուած: - 10. Եւ խօսեցաւ ընդ նմա Աստուած՝ և ասէ, **ահաւասիկ** ուխտ իմ ընդ քեզ - 20.

ԱՀԵԱԿ – իսկ ապա ի բաց ասի որոշումն՝ որ **յահելացն**, և որ զկնի այնորիկ: - 9. ետ **գահեակ** ձեռն սրբոյն Անդրէի առաքելոյն. - 108.

ԱՀ ԵՒ ԵՐԿԻՒԳ - Նակ **գահ և գերկիւղ** և սպառնալիս գազանամիտ և թեթևահաւատ /և/ ճուաղաբարոյ մարդկան այնոցիկ ի վերայ մեր: - 14. և **ահ և երկիւղ** ձեր ի վերայ ամենեցուն եղիցի: - 18.

ԱՀԻԻ ԸՄԲՐՆԵԼ - և առհասարակ ամենեքեան **ահիւ ըմբռնեալք** արք և կանայք. - 94.

ԱՀԻԻ ԼԻՆԵԼ - Իսկ արքայ Պռոքոս **ահիւ** մեծի **եղեալ** տագնապէր-81.

ԱՀՈՏԱ - դէպ եղև անցանել նմա ընդ Պրասմին Եւսեբեայ կնոջ այրոյ, որ կոչէր **Ահոտա**. - 65.

ԱԳ - և փող եղեգնե/այ/ դնել ի քիթս նորա, և արկանել **աղ** և բորակ քացախ ի ներքս: - 89.

ԱԳԱԳԱԻ - Եւ սակս այնր **աղագաւ** եկի ... զի խորհեսցուք ի միասին և մերոյ ազգականին վրէժ խնդրեսցուք: - 73.

ԱԳԱԳԱԿԵԼ - Եւ հրամայէր ի մէջ հրապարակին **աղաղակել** զօրացն իւրոց քառասուն անգամ - 103. Չայս **աղաղակեցին** տասն անգամ. - 103.

ԱԳԱՆԳ - Եւ մաշեալ կատաղէր դիւական **աղանդովն**. – 78. Առ սոցի Նաւատիոս երէց Հռոմայեցոց եկեղեցոյն եղև Առաջնորդ **աղանդոյն Կաթարոսաց**. - 71.

ԱԳԱՆԳԱԻՈՐ - Ասացին **աղանդատրքն**, եթէ անհնարին է քեզ բժշկել – 102.

ԱԳԱՆԳ ԿԱԹԱՐՈՍԱՑ - Առ սոցի Նաւատիոս երէց Հռոմայեցոց եկեղեցոյն եղև Առաջնորդ **աղանդոյն Կաթարոսաց**-71.

ԱԳԱՉԱՆՔ - վասն այսորիկ խնդրէր կամք իմ ի քէն ... հանդերձ մախթանօք և բազում **աղաչանօք** կատարել ըստ յառաջագոյն գրելեացն ինոց, գոյն խորհուրդ խնդրոյն – 15.

ԱԳԱՉԵԼ - և **աղաչեմ** զի մի և եթէ կամօք կամ յօժարութեամբ որ յիմս խոնարհեցար տգիտութիւն – 2. **աղաչեմ**՝ որ և Հոգին սուրբ ... նա եղիցի գերահրաշ և արփիափայլ շնորհաց տարածիչ և նորոգիչ – 10. և **աղաչեմ** զկենաց տուողն, զի մշտնջենաւոր ձգեսցես զժամանակս կենաց քոց – 10. առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ բազում ընծայիւք՝ **աղաչել** զնա, զի կատարեսցէ զկամս նորա - 30. Արդ վասն այնորիկ գրեցի առ քեզ՝ **աղաչել** քեզ, զի աշխատ լիցիս և եկեսցես առ իս – 47. և **աղաչեցին** զՈրոգինէս, և նա դարձոյց զնոսս ի ճշմարտութիւն. – 66. Իսկ զԳիոննէսիոս **աղաչեալ**՝ զի և նա եկեսցէ ի ժողովն – 76. Չայսու ժամանակաւ առաքէ

Շապուհ արքայից արքայ առ մեծն Կոստանդիանոս **աղաչել** զնա խնդրել զդաշնաորութիւն և զւեր հաստատութեան ի մէջ երկոցունց: - 110.

ԱՂԲԵՈՍ - Գետք մեծամեծք և անուանիք ... **Աղբեոս**, Տորոս, Երբոտոս ... - 25.

ԱՂԲԻԱՆՈՍ – Հանդերձեր պատրաստէր մեծ Արքն Եպիսկոպոսն Գրիգոր և զնորին որդի զՌատակէս Եպիսկոպոսն և զԵպիսկոպոսն **Աղբիանոս** – 106.

ԱՂԲԻԻՐ - **աղբիւր** է Աստուած ամենայն բարեաց, և արբուցանէ զպասքեալ ոգիս – 4. և ինքն է բարի և **աղբիւր** բարութեանց – 4.

ԱՂԵՂՆ - և զրկալիր քարշեալ զլայնալիճ **աղեղն**՝ դիպեցուցանէ զերեքթիւնեան /զերեքթեան. Հ.Հ./ սուր ոլաքն՝ կրծից տախտակին – 26. և ժողովէ զաբազմամբոխ արի արանց ամենայնի աջողածեռնութեամբ ի տէգ նիզակի՝ և **յաղեղն**՝ և ի սուսեր – 35.

ԱՂԵՏ – Յաղագս ... **աղետին**՝ որ եհաս ընտանեաց նորա և ազգականաց նորա ի զօրացն Խոսրովո: - 84,115. և հարցեալ զմիմեանս յաղագս յառաջագոյն **աղետին**՝ որ եհաս նոցա ի Տեառնէ - 106.

ԱՂԵՐՍ - Բայց նախ Տեառն ինոյ պատուականի Հօր և պատկառեցուցչի **զաղերս** ինոյ բանից առաջի արկանեմք քում պատուասիրութեանդ - 2.

ԱՂԷՔՍԱՆԴՐ /անձնանուն/ - Չսա եսպան **Աղէքսանդր** ի վեցերորդ ամի թագաւորութեանն իւրոյ – 34. Եւ ընդ ամենայն թագաւորեաց **Աղէքսանդր** ամս երկոտասան և ամիսս եւթն: - 34. Յետ **Աղէքսանդրի** թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս-Ողորոս ամս քառասուն. – 34. **Աղէքսանդր** Յունաց էր թագաւորեալ ի տիեզերակալութեան իւրում՝ ամս երկոտասան: - 41. Եւ յետ նորա նստաւ **Աղէքսանդր Ա** Եպիսկոպոս Անտիանոս ... ամս քսան: - 53.

ԱՂԷՔՍԱՆԴՐ, ԱՂԷԿՍԱՆԴՐ /տեղանուն/ - Սա առաջին եկաց ի Հռովմս ինքնակալ կայսր երեք ամ ի Կղեովպատրէ Եգիպտոսի և **Աղէքսանդրի** թագաւորի. – 42. Եւ ի սոյն աւուրս էր Որոզինէս **յԱղէկսանդր** – 64. և էին Եպիսկոպոսք՝ Ստեփաննոս ի Հռոմայ, Դիոնեսիոս **յԱղէկսանդրէ** - 71. և բազում Հայրապետք մարտիրոսացան, Պետրոս **Աղէքսանդրի** Եպիսկոպոսն, և Փելիաս Թեոմացիս քաղաքի – 80.

ԱՂԷՔՍԱՆԴՐ Ա. - Եւ յետ նորա նստաւ **Աղէքսանդր Ա** Եպիսկոպոս Անտիանոս ... ամս քսան: - 53

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՅԻ, ԱՂԷԿՍԱՆԴՐԱՅԻ - Եւ Տիգրան ... ընդվզեալ մեռանի **յԱղէքսանդրացոց Մակեդոնացոց**: - 38. Յաւուրս սոցա **Անատողիոս Աղէքսանդրացի** եկաց Եպիսկոպոս Ղևոնդիսեցոցն – 80. իսկ **Դիոնեսիոս Աղէկսանդրացի** հաստատեաց զնա ի հաւատս: - 71.

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՅԻ/Ք/ ՍԱԿԵԴՈՆԱՅԻ/Ք/ - Եւ Տիգրան ... ընդվզեալ մեռանի **յԱղէքսանդրացոց Մակեդոնացոց**: - 38.

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ - Ի սորա յառաջնում ամի Մարկոս Աւետարանիչն **յԱղէքսանդրիա** և յԵգիպտոս քարոզեաց զԱւետարանն. – 52.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՍԱԿԵԴՈՆԱՅԻ – յետ տիրելոյն ... ամենայն տիեզերաց **Աղէքսանդրի Մակեդոնացոց** ... զհարց և զհրաման իշխանութեամբ Մակեդոնացոցն անուանեսցի. – 39. յետ թագաւորութեանն **Աղէքսանդրի Մակեդոնացոյ**՝ հաստատեցաւ թագաւորութիւնն Յունաց. – 41. Յետ վաքսուն ամի մահուանն **Աղէքսանդր Մակեդոնացոյ**՝ թագաւորէ ամս երեսուն և մին. – 68. զոր սպան **Աղէքսանդր** /զրբում՝ Աղէքանդր. Հ.Հ./ **Մակեդոնացի**: - 109.

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍ – Թագաւորէ **Աղէքսանդրոս**՝ որդի Մամէի ... ամս տասն և երեք: - 64. Եւ եղեն վկայք Եպիսկոպոսք ի Հռոմ՝ Փլաբիանոս, յԱնտիոք՝ Բաբեդաս, յԵրուսաղէմ՝ **Աղէքսանդրոս**. – 70.

ԱՂԻՍԱՍ - Գետք մեծամեծք և անուանիք ... **Աղիսաս**, Որայիս, Թետողոն – 25.

ԱՂԽ - Արամանեակ, որդի Հայկայ ... բնակի ի Հայք յետ մահուաանն Հայկայ հօր իւրոյ. և Խոռ և Մանուազ եղբարք իւր հանդերձ **աղխի** իւրեանց ընդ մմին: - 27.

ԱՂՉՆԻՔ - առ որ առաքեաց Աբգարոս երկուս ի գլխաւորաց իւրոց՝ զՄարիիար բղէշխ **Աղճնեաց** և Շամշագրատ նահապետ Ապահունեաց – 46. ապա այնուիետն թագաւորն գումարեալ գունդ ի գլխաւոր նախարարացն իւրաքանչիւր զօրօք: Առաջին՝ իշխան Անկեղտանն, երկրորդ՝ իշխան **Աղճնեաց**՝ որ էր բղէաշխ – 99.

ԱՂՄԿԵԼ - և **աղմկեալ** ի ցնորից իմն խելագար անսաց – 60.

ԱՂՄՈՒԿ - աստ ուրեմն ի մէջ անցեալ քոյր նոցա Աստղիկ ... համոզեալ դադարեցուցանէ **զաղմուկս**. – 25.

ԱՂՈՒԱՆՔ - և անուանք աշխարհացն՝ Ատրպատականք, **Աղուանք**, Ամագոնիայ, ... և այլ ևս: - 23. հրամայէ զօրս ժողովել յԱտրպատականէ ... և զօրս **Աղուանից** և զՎրաց և զԽախտեաց – 44. և ժողովեաց զօրս **Աղուանից** և զՎրաց – 70. Իսկ թագաւորն Տրդատ ... բազում զօրօք Հայաստանեաց իջեալ ի դաշտն Գարգարացոց ի սահմանս **Աղուանից** – 96.

ԱՂՋԻԿ - և մերն Տիգրան հրամանաւ նորին ի Միջերկրայսն ըմբռնեալ ի կալանս **յաղջկանէ** միոջէ իշխեցելոյ կողմանցն այնոցիկ – 63.

ԱՂՏԱՍ - Եւ այս են անուանք երկուտասան լերանց անուանեաց. Լիբանան, Կալկաս, Տորոս, **Աղտաս** ... - 24.

ԱՂՏԵՂԱԳՈՐԾՈՒԹԻԻՆ - և այլ ինչ բազում **աղտեղագործութիւն** ի ժամանակն յայն գործէին զոհել հարց զորդիս և հերձել զմանկունս: - 75.

ԱՂՔԱՏ - երանի որ խորհի **յաղքատն** և ի տնանկն. – 3. Եւ զամենայն զանձս մթերեալ ի մեհենացն՝ **յաղքատս** բաշխէին: - 97.

ԱՂՕԹԵԼ - Եւ երանելին ոչ դադարէր **յաղօթելոյ** ի մէջ օձիցն: - 90.

ԱՂՕԹՍ ԱՌՆԵԼ - և աղաչեմ ... անդադար **աղօթս առնել** առ Աստուած – 2.

ԱՂՕԹՍ ՄԱՏՈՒՅԱՆԵԼ - Իսկ երանելին ի միոյ միոյ միջոց ի չարչարանացն **աղօթս** առ Աստուած **մատուցանէր**: - 90. Իսկ նա ... և ի միջոյ չարչարանացն բազում **աղօթս մատուցանէր** յերկարեալ զբանս իւր. – 90. Իսկ երանելին Կիրեղ ... և մեծաւ յառաջմամբ **աղօթս մատուցեալ** յանկարծակի փայլեաց յերկրի. – 105.

ԱՂՕԹՔ - և փութամ մտադրութեամբ հատուցանել զոր խոստացայ՝ վատահացեալ **յաղօթս քո**: - 2. կարօտ եմ օգնականութեան **աղօթից քոց**՝ ով վսեմականդ ի հարս ՝ Հայր սուրբ. – 2. յիշատակաւ սիրոյ մշտնջենաւորեսցես՝ յիշելով **յաղօթս քո** – 12. Արդ օն առեալ **զքո աղօթսդ** տացես ինձ ի սատարութիւն – 13. տաճարք **աղօթից** կործանեցան. – 80. Իսկ նոքա պտուղ **աղօթից** նոցա, զոր առնէր ի Խորվիրապին ի մէջ թիւնաւոր օձիցն: - 93. Եւ զհիւանդս բժշկէր **աղօթիք** իւրովք. – 104. և աղաչեմ ... անդադար **աղօթս առնել** առ Աստուած – 2. Իսկ երանելին ի միոյ միոյ միջոց ի չարչարանացն **աղօթս** առ Աստուած **մատուցանէր**: - 90. և ի միջոյ չարչարանացն բազում **աղօթս մատուցանէր** յերկարեալ զբանս իւր. – 91. Իսկ երանելին Կիրեղ ... և մեծաւ հառաջմամբ **աղօթս մատուցեալ** յանկարծակի փայլեաց յերկրի. – 105. Սա յաւորս Չատկի տօնի կամեցաւ **առնել աղօթս** ընդ ժողովուրդս եկեղեցոյն. – 66. և **կացեալ յաղօթս** ի վերայ ջրոյն, հրամայեաց արկանել ի ճրագսն հաստատուն հաւատով. – 63.

ԱՃԱՊԱՐԵԼ - ապա յայնժամ **աճապարեալ** սրբոյն ... և առեալ զգայիսունն ի ձեռն իր՝ հարկանէ զվիշապն – 66.

ԱՃԵԼ - յայլազգ անհնար է **աճել** աշակերտին, եթէ ոչ վարդապետն զառուն իմաստասիրութեան հեղուցու առաջի: - 13. Եւ ապա զկնի արտասահմանելոյն ի դրախտէն՝ **աճեցին** ծնունդք նորա, և բազմացան – 16. և **աճեցին** ծնունդք նորա ըստ իրաքանչիւր ազգաց: - 18. Իսկ որդիք Յաբեթի և ծնունդք նոցա՝ որ սերեցան և **աճեցին**, և լցին զերկիր. – 18. **աճեցէք** և բազմացարուք, և լցէք զերկիր. – 18. Եւ **աճեցին** և եղիցին /են/ ազգք – 18. **աճեցին** և բազմացան և լցին զերկիր: - 19. իրաքանչիւր ըստ լեզուս յազգս իրեանց և ի տոհմս իրեանց **աճեցին** և բազմացան, և լցին զերկիր: - 22.

ԱՃԵՅՈՒՅՄՆԵԼ – յարմարել ըստ պատշաճի պիտոյից զանչափն ի չափատրութիւն բերելով, և զչափատրն **աճեցուցանել** – 14.

